ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1953 Общественные науки

Աբպեր Երևանցի

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԴՐՈՇԱԿԱԿԻՐԸ

(Մ. Ֆ. Ախունդովի մահվան 75-ամյակի առթիվ)

19-րդ դարի սկզբին Ադրբեջանի միացումը Ռուսաստանին շրջադարձային կետ հանդիսացավ ադրբեջանական ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Այդ միացման շնորհիվ ադրբեջանական ժողովուրդը փրկվեց Իրանի և Թյուրքիայի բարբարոսական ճնշումից և սկսեց արագորեն զարգացնել իր էկոնոմիկան ու կուլտուրան։ Խանությունների բաժանված, ցրված և կուլտուրապես հետամնաց Ադրբեջանը կապվում էր տնտեսապես և կուլտուրապես բարձր աստիճանի վրա գտնվող Ռուսաստանի հետ։ Ադրբեջանի կոմունիստների մարտական ղեկավար ընկեր Մ. Ջ. Բաղիրովը ճիշտ կերպով գրում է, որ «Ջնայած ցարական գաղութարարների կամայականությանը և դաժանությանը, Ադրբեջանը Ռուսաստանին միացնելը ադրբեջանական ժողովրդի համար բացառիկ դրական դեր խաղաց։ Մոտիկությունը ռուս ժողովրդի հետ, ռուս աշխատավորների հետ համատեղ պայքարը ցարական ինքնակալության դեմ, շփումը առաջավոր ռուսական կուլտուրայի, պրոգրեսիվ, ռևոլյուցիոն ռուս հասարակական մտքի ներկայացուցիչների հետ՝ նպաստեցին ադրբեջանական ժողովրդի նյութական և հոգեոր կուլտուրայի բարձրացմանը ու. խթան հանդիսացան Ադրբեջանի աշխատավորների շրջանում ռևոլյուցիոն շարժման զարգացման համար»[1]։

Առաջավոր ռուսական կուլտուրայի և գրականության հետ ծանոթությունը՝ 19-րդ դարի ադրբեջանական ինտելիգենցիայի շրջանում ուժեղ կերպով զարգացրեց լուսավորչական հայացքները։

Ադրբեջանական ժողովրդի պանծալի զավակներ Մ. Ֆ. Ախունդովի, Ս. Ա. Շիրվանիի, Հ. Ռ. Զարդարիի, Ն. Բ. Վեզիրովի և 19-րդ դարի ուրիշ մի շարք հայտնի դեմքերի լուսավորական հայացքները ձևավորվել են ռուսական առաջավոր մտքի խորը ազդեցությամբ։

Ադրբեջանական այդ ականավոր գեմքերի լուսավորական հայացքների մեջ կարևոր տեղ ունի ժողովուրդների բարեկամության գաղափարը, որը հնագույն դարերից հանդիսացել է ադրբեջանական գրականության լավագույն տրադիցիաներից մեկը և նոր աստիճանի բարձրացավ 19-րդ դարում՝ Ադրբեջանը Ռուսաստանին միանալուց հետո։

Հայտնի է, որ դեռ միջնադարում ապրող ադրբեջանական բանաստեղծները գիտակցել են ժողովուրդների միջև սիրո և բարեկամության ամրապնդման խորը նշանակությունը, իրենց երկերում մեծ սիրով կերտել են այլ ժողովուրդների ներկայացուցիչների կերպարները։ Համաշխարհային պոեզիայի գագաթներից Նիզամի Գյանջևին իր անմահ պոեմներում ադրբեջանական ժողովրդի զավակների հետ հավասար պատկերել է նաև ռուս,

---

[1] *Մ. Ջ. Բաղիրով, Ժողովուրդների մեծ առաջնորդ, Ադերնեշր, 1950, էջ 32։*

չինական, հնդիկ, հռոմեացի, իրանական ժողովուրդների ներկայացուցիչների, նույն սիրով խոսել է ծաղկազարդ Հայաստանի և «երեսը սև, բայց հոգին սպիտակ» նեգրի մասին։

18-րդ դարի ազրբեջանական ռեալիստական գրականության առաջին նմուշները ստեղծող Վագիֆի և Վիդադիի մի շարք բանաստեղծությունները և ամբողջ ազրբեջանական ժողովրդական բանահյուսությունը տոգորված են ժողովուրդների բարեկամության գաղափարով։

Սակայն, պետք է նշել, որ այդ ստեղծագործությունները չեն կարողացել բավականաչափ արտացոլել ժողովուրդների բարեկամությունը, չեն բացահայտել այդ բարեկամության սոցիալական-քաղաքական արմատները, այդ հարցը չեն կապել այն կոնկրետ, առաջնակարգ խնդիրների հետ, որոնք կանգնած են եղել ժողովուրդների առջև՝ ազատության համար, բռնության դեմ նրանց մղած պայքարում։ Միևնույն ժամանակ գեղարվեստական այդ երկերում չեն մերկացվել, ջախջախվել ժողովուրդների բարեկամության թշնամիները։

19-րդ դարի ազրբեջանական առաջավոր գրողները, ռուսական հասարակական մտքի բարերար ազդեցությամբ, նոր որակ ու բովանդակություն տվին ժողովուրդների բարեկամության գաղափարին, այն կապելով Անդրկովկասի ժողովուրդների համատեղ պայքարի հետ՝ ընդդեմ ներքին և արտաքին թշնամիների։

Չնայած ցարիզմի գործադրած դաժանությանը և Ռուսաստանի ժողովուրդներին իրար հետ թշնամացնելու ստոր քաղաքականությանը, օրեցօր ուժեղացող հասարակական և կուլտուրական պրոգրեսիվ կապերը ազրբեջանական, հայ ու վրաց ժողովուրդների եղբայրությունն է՛լ ավելի ամրապնդեցին։ Անդրկովկասի աշխատավորները ձեռք ձեռքի տալով, ռուս ժողովրդի օրինակով սոցիալական-քաղաքական լայն պայքար ծավալեցին ցարիզմի և կալվածատիրության դեմ։

19-րդ դարի առաջին քառորդից սկսած ազրբեջանական բանաստեղծները արդեն չէին բավականանում հարևան ժողովուրդների գեղեցկուհիների գովերգումով (օր. Միրզա Շաֆի—«Սուսանի»), նրանք արտահայտում էին նոր, սոցիալական մտքեր, ժողովուրդներին կոչում էին «միաբերան» լինելու (օր. Դ. Ի. Զաքիր—«Նամակ Ջաֆարգուլի խան Նավայինը»)։

Սակայն, իրականում Մ. Ֆ. Ախունդովն էր, որ հանդիսացավ ժողովուրդների բարեկամության ճշմարիտ դրոշակակիրը, իր գեղարվեստական երկերում վայելուն կերպով արտացոլելով այդ բարեկամության սոցիալական-քաղաքական էությունը։

Մ. Ֆ. Ախունդովը առանց խտրության սիրել և հարգել է բոլոր ժողովուրդներին, նա բռնության, ֆանատիզմի ու տգիտության լծից այդ ժողովուրդների ազատագրման սրբազան գործին է նվիրել իր ամբողջ կյանքը։ Ժողովուրդներին շահագործողներն ու կեղեքողները ինչ ազգության էլ պատկանեն, նրանք, այդ բոլոր խաներն ու բեկերը, փաշաներն ու աղաները, թագավորներն ու վեզիրները, ախունդներն ու վաիզները՝, եվրոպական բոլոր գաղութարարները հանդիսացել են Ախունդովի թշնամիները, որոնց դեմ է ուղղված նրա ամբողջ ստեղծագործությունը։

---

[1] Վաիզ—կրոնական քարոզիչ։

«Աչքի ընկնող անհատները կարող են ոչնչի փոխարկվել, եթե նրանց իդեալներն ու ցանկությունները հակառակ են գնում հասարակության տնտեսական զարգացմանը, հակառակ են գնում առաջավոր դասակարգի պահանջմունքներին, և ընդհակառակը—աչքի ընկնող մարդիկ կարող են դառնալ իրոք աչքի ընկնող անհատներ, եթե նրանց իդեալներն ու ցանկությունները ճիշտ են արտահայտում հասարակության տնտեսական զարգացման պահանջմունքները, առաջավոր դասակարգի պահանջմունքները»[1]։

Մ. Ֆ. Ախունդովը հենց պատկանում էր այդ կարգի մարդկանց շարքին։ Նրա առաջ քաշած առաջադեմ գաղափարները, այդ թվում ժողովուրդների բարեկամության ու համագործակցության գաղափարը բխում էր իր ժամանակի հասարակական-տնտեսական զարգացման պահանջմունքներից։

Մ. Ֆ. Ախունդովի, որպես մատերիալիստ և աթեիստ մտածողի, որպես պրոգրեսիվ քաղաքացու և գրողի, հասունացման գործում մեծագույն, վճռական դեր են կատարել 19-րդ դարի առաջավոր, վերընթաց ռուսական հասարակական միտքը, առաջին հերթին ռուս մեծ ռևոլյուցիոն դեմոկրատներ Բելինսկին, Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը, ռուս խոշորագույն գրողներ Պուշկինը, Գոգոլը և ուրիշները։

Մեծ մտածողի անձնական կյանքը, շրջապատը, նրա ծանոթությունը և մտերմությունը ռուս, հայ, վրացի և այլ ժողովուրդների առաջավոր զավակների հետ նույնպես խոշոր դեր են կատարել Ախունդովի առաջավոր հայացքների ձևավորման գործում։ Ախունդովը իր կյանքի մեծագույն մասը ապրել է Թիֆլիսում, Անդրկովկասի այն ժամանակվա ադմինիստրատիվ կենտրոնում, ուր ապրում էին բազմաթիվ ժողովուրդներ։ Հենց այդ քաղաքում Ախունդովը ձեռք էր բերել տարբեր ազգությունների պատկանող բազմաթիվ բարեկամներ, ծանոթներ։ Ախունդովի անձնական բարեկամների թվին էին պատկանում այնպիսի հռչակավոր մարդիկ, ինչպիսիք էին դեկաբրիստ բանաստեղծ Ա. Բեստուժևը (Մարլինսկի), հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանը, վրաց գրամատուրգիայի հիմնադիր Գր. Էրիստավին, հայտնի ռուս դեկաբրիստ բանաստեղծ Ա. Օդոևսկին և ուրիշները, որոնք իրենց անձնական, բարեկամական կապերով և դեմոկրատական, պրոգրեսիվ աշխարհայացքով, ուրիշ ազգերի հանդեպ տածած իրենց խորը սիրով ու հարգանքով, աչքի ընկնող դեր են կատարել։

* * *

Մ. Ֆ. Ախունդովը, որպես ժողովուրդների բարեկամության դրոշակակիր, հանդես է եկել և՛ իր գեղարվեստական երկերում և՛ իր փիլիսոփայական ու գրական քննադատական աշխատություններում։ Նա իր բազմաթիվ գեղարվեստական գործերում մեծ սիրով խոսել է ռուս ժողովրդի, նրա առաջավոր կուլտուրայի, նրա անմահ և քաջ զավակների մասին, գովերգել է հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որի արմատները նա տեսել է այդ ժողովուրդների սոցիալական-քաղաքական նույնանման գոյավիճակի մեջ։

Այդ բոլորի մասին բավականաչափ գրել են և՛ ադրբեջանական և՛ հայ

[1] Համ Կ(բ)Պ Պատմության համառոտ դասընթաց, Հայպետհրատ, 1950, էջ 21։

գրականագետները։ Մենք այստեղ կանգ կառնենք Ախունդովի այն տեսական աշխատությունների վրա, որոնք մեզ հարուստ նյութ են մատակարարում ժողովուրդների բարեկամության և համագործակցության մասին։

Մ. Ֆ. Ախունդովը ժողովուրդների բարեկամության հարցին միշտ և ամեն տեղ տվել է սոցիալական-քաղաքական բնույթ, աշխատավոր մասսաների ազատագրման գործում ժողովուրդների համագործակցությունը համարել է կարևոր հանգամանքներից մեկը։ Նա ճնշված և ստրկացած բոլոր ժողովուրդներին կոչել է միարանության, միասնության և համատեղ պայքարի՝ ընդդեմ բռնության, անարդարության ու ֆանատիզմի, բացահայտել ու մերկացրել է ժողովուրդների բարեկամության ու բոլոր տեսակի թշնամիներին։

Մ. Ֆ. Ախունդովը ազգերի բարեկամության գաղափարը կապել է հայրենասիրության, քաջության, պատվի, արդարության և հավասարության գաղափարների հետ։ Մ. Ֆ. Ախունդովը իր «Քեմալուդդովլայի Նամակները» հայտնի փիլիսոփայական աշխատության մեջ գրում է, որ «Նա (այսինքն՝ Նամակների հեղինակը — Ա. Ե.) ուզում է, որպեսզի իր ազգի սրտի դաշտում քաջության, պատվի, ազգերի բարեկամության, հայրենասիրության, արդարության և հավասարության սերմերը ցանվեն, թշնամությունը վերածվի միասնության, ազգի միջից վերանա բռնությունն ու թշվառությունը, նա ձեռք բերի հարստություն և ուժ»[1]։

Մ. Ֆ. Ախունդովը բացահայտել և մերկացրել է այն ռեակցիոն երևույթները, որոնք 19-րդ դարում ֆեոդալական-պատրիարխալ Արևելքում ճնշել են ժողովուրդների ազատությունը և եղբայրությունը։ Նա, որպես աթեիստ մտածող, իսլամական կրոնը, կրոնական հավատալիքները համարել է ժողովուրդների համագործակցության և բարեկամության, հայրենասիրության ոխերիմ թշնամի, մերկացրել և սպանիչ ծաղրի է ենթարկել այն։

Վ. Ի. Լենինը սովորեցնում է, որ «Կրոնը հոգևոր ճնշման մի տեսակն է, որ ամենուրեք և ամեն տեղ ծանրացած է ուրիշների համար հավետ աշխատող, կարիքի ու մենակության տակ ճզմված ժողովրդական մասսաների վրա։ Շահագործողների դեմ մղած կռվում շահագործվողների անզորությունը նույնպես անխուսափելիորեն հանդերձյալ լավագույն կյանքի հավատ է ծնում, ինչպես բռնության դեմ մղած պայքարի մեջ վայրենու անզորությունն աստվածների, սատանաների, հրաշքների ու այլ բաների հավատ է ծնում։ Ով իր ամբողջ կյանքում աշխատում է ու կարիքի մեջ է, կրոնը նրան երկրային կյանքում հեզություն ու համբերություն է ուսուցանում, մխիթարելով նրան երկնային հատուցման հույսով։ Իսկ նրանց, ովքեր ուրիշի աշխատանքով են ապրում, կրոնը բարեգործություն է ուսուցանում երկրային կյանքում, նրանց արդարանալու շատ էժանագին միջոց առաջարկելով իրենց շահագործական ամբողջ գոյության համար, և ձեռնտու գնով երկնային բարեկեցության տոմսեր ծախելով։ Կրոնը ժողովրդի հաշիշն է։ Կրոնը հոգևոր օղու մի տեսակն է, որի մեջ կապիտալի ստրուկները խեղդում են իրենց մարդկային պատկերը, փոքրիշատե մարդավայել կյանքի իրենց պահանջը»[2]։

---

[1] Մ. Ֆ. Ախունդով, Երկեր, Ակերնեշր, 1938, հատ. 3, էջ 103։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 92—93։

Մ. Ֆ. Ախունդովը բացահայտել է թե իսլամական կրոնը ինչպիսի ողբերգական հետևանքներ է ունենում ամբողջ արևելյան ժողովուրդների համար, ինչպես այդ կրոնը օգնում է բռնակալներին՝ զրկելու աշխատավոր ժողովուրդներին ազատությունից, հավասարության քաղցրությունից և համամարդկային իրավունքներից։ Ախունդովը գրում է. «Արևելքի ժողովուրդները արաբների կրոնի հանդես գալու և նրանց Ասիայում հզորանալու պատճառով միանգամից ամբողջովին կորցրին իրենց ազատությունը, բոլորովին զրկվեցին հավասարության քաղցրությունից և համամարդկային իրավունքի բարիքներից և նույնիսկ անզոր են հասկանալու այդ զրկվածությունը»[1]։

Ժողովուրդների միջև իրավահավասարությունը, անձի և խղճի ազատությունը ոտնակոխ անող երկերեսանի հոգևորական «գործիչներին» Ախունդովը սպանիչ ծաղրի է ենթարկում և ցույց տալիս, որ մուսուլմանական կրոնի օրենսդրությունը՝ շարիաթը լայն հնարավորություններ է ստեղծում ուրիշ ազգերի իրավունքները ոտնակոխ անելու համար։ Արևելքում ոչ-մուսուլմանը անզոր է իր օրինական իրավունքները պաշտպանելու։ Օրինակ, «...մի ոչ-մուսուլման,—գրում է Ախունդովը,—մի մուսուլմանից իր տաս թումանն է պահանջում։ Մուսուլմանը հրաժարվում է։ Երկուսն էլ, պաշտպանվելու նպատակով, դազիի մոտ են գնում։ Ղազին ոչ-մուսուլմանից վկա է պահանջում։ Բողոքատու ոչ-մուսուլմանը նահանգի պատվավոր վաճառականներից չորս հոգի ոչ-մուսուլման վկա է բերում։ Ղազին այդ չորս հոգի ոչ-մուսուլմանի վկայությունը վստահելի չի համարում և բողոքատու ոչ-մուսուլմանից մուսուլման վկա է ուզում։ Բողոքատու ոչ-մուսուլմանը մուսուլմաններից վկա գտնել չի կարողանում։ Այդ պատճառով էլ իր գումարից զրկվում է և լացուկոծով դազիի դատարանից դուրս գալով ասում է.

«Եվ աստված, սա ի՞նչ օրենք է, սա ինչ դիվան է»։

Մի՞թե դատավարություններում հավասարությունն այսպես կլինի»[2]։

Ախունդովը խորը ատելությամբ դիմելով հոգևորականներին, հարց է տալիս, թե «ինչո՞ւ շարիաթը հեթանոսներից և մուշրիքներից[3] ստրուկների և ստրկուհիների վաճառքը թույլ է տալիս։ Մի՞թե այս գործը ամենաստոր բռնություն չէ։ Եվ մի՞թե ազատության դեմ չէ»։

Շարիաթը թույլատրում է ուրիշ կրոններին հարողներին ենթարկել ամենածանր պատիժների։ Ախունդովը ատելությամբ մերժելով ուրիշ ազգերի նկատմամբ գործադրված մահապատժի այն օրենքը, որտեղ ասված է. «Մուշրիքներին որտեղ տեսնեք, սպանեցեք», գրում է «Արդյոք սա բռնություն չէ՞, արդյոք... մարմնի անձեռնմխելիությանը դեմ չէ՞»[5]։ Մեծ մարդասերը շատ լավ գիտակցում էր, որ «Աշխարհում կյանքը ոչ մի բարիքով չի փոխարինվում և դա որպես լիակատար արտադրության պահանջ ազատ մարդկանցից խլել չի կարելի»[6]։

---

1 Մ. Ֆ. Ախունդով, Երկեր, Ադերբեջան, 1938, հատ. 3, էջ 77։

2 Նույն տեղում, էջ 214։

3 Մուշրիք—անհավատ, աստծու զոյությունը ժխտող (քաֆիր)։

4 Մ. Ֆ. Ախունդով, Երկեր, հատ. 3, էջ 214։

5 Նույն տեղում, էջ 216—217։

6 Նույն տեղում, էջ 216։

Մերկացնելով կրոնական խավարամոլներին, Մ. Ֆ. Ախունդովը կոչ էր անում ժողովուրդներին համագործակցել, իրարից «գիտություն և արդյունաբերություն» սովորել։ «Ով վաիզներ, ով գիտնականներ, ով շարլատաններ, ինչու խեղճ, տգետ ժողովրդին... գժոխքի վախով՝ չեք թողնում ուրիշ ազգերի հետ հանդիպի և (նրանցից) գիտություններ և արդյունաբերություն սովորի»[1]։

Խոսելով ժողովուրդների միջև տնտեսական և կուլտուրական փոխադարձ կապի անհրաժեշտության մասին, նա դատապարտում էր ժողովուրդների անիմաստ ուխտագնացությունը դեպի Մեքքա։ Տարբեր ժողովուրդների հարյուրավոր ու հազարավոր ներկայացուցիչների հավաքույթը Մեքքայում ոչ մի օգուտ չէր բերում այդ ժողովուրդներին։

Ընդհակառակը, այդ ուխտագնացությունը բազմաթիվ վնասներ էր հասցնում ուխտավորներին ու նրանց ընտանիքներին։ Ուխտավորները մեծ քանակությամբ գումարներ էին ծախսում. նրանցից շատերը ճանապարհներին կոտորվում էին։ Արաբիայում սկսվող խոլերան ուխտավորների միջոցով տարածվում էր ամբողջ աշխարհում, պատճառ դառնալով հազարավոր մարդկանց մահվան։

Ախունդովը մերկացնում և մերժում էր ոչ միայն իսլամական, այլ ընդհանրապես բոլոր կրոնները, որպես մարդկությանը համբերատարություն ու տգիտություն քարոզող իդեոլոգիա։ «Ես բոլոր կրոնները փուչ և առասպել եմ համարում,—բացականչում էր Միրզա Ֆաթալին,—նրանցից ոչ մեկին, հանդերձյալ կյանքում փրկության հույսով, չեմ հարում»[2]։

Եվ պատահական չէ, որ Ախունդովը համառորեն պայքարում էր մյուրիդիզմի և Շամիլի գլխավորած ռեակցիոն հոսանքների դեմ, որոնց գործունեությունը լինելով անգլիական գաղութարարների քաղաքականության թելադրանքը, նպատակ ուներ պառակտում գցել ռուս և Ռուսաստանի այլ ժողովուրդների միջև, ենթարկել Կովկասի ժողովուրդներին թյուրք ենիչերիներին և անգլիական գաղութարարներին[3]։

Իր ամբողջ կյանքում Մ. Ֆ. Ախունդովը համառ, հետևողական պայքար է մղել նացիոնալիստական պանիսլամիստական «գաղափարախոսության» դեմ, որը մի արյունոտ զենք է եղել օսմանական սուլթանների ու փաշաների և պարսիկ շահերի ու վեզիրների ձեռքում՝ ժողովուրգներին բռնության ենթարկելու, կրոնական կապանքներով կաշկանդելու և նրանց միջև խռովություն և կոտորածներ հրահրելու համար։

Պանիսլամիզմի գաղափարախոսները քարոզում էին, թե իբր աշխարհի բոլոր ազգերը կեղտոտ են, բացի պարսիկներից կամ մուսուլմաններից։ Այդպիսի մոլի պանիսլամիստ էր պարսիկ ֆանատիկ բանաստեղծ Միրուշը, որը Ախունդովի կողմից ենթարկվել է սպանիչ ծաղրի։ «Աշխարհի բոլոր ժողովուրդներին,—գրում է Ախունդովը,—համարելով կեղտոտ և ճիճուներ, նրանց չմոտենալը և նրանց կերակուրներն ուտելուց խուսափելը մեզ համար անհրաժեշտ եք համարում և նրանց ենթարկում եք մեր ատե-

[1] Մ. Ֆ. Ախունդով, երկեր, հատ. 3, էջ 88։
[2] Նույն տեղում, էջ 62։
[3] Տես М. Д. Багиров, К вопросу о характере движения мюридизма и Шамилия, Госполитиздат, 1950 г.

լությանը։ Կարծես թե, ամբողջ աշխարհը փշոտ է, միայն դուք մի փունջ կարմիր վարդ եք, որ բացվել եք այդ փշերի մեջ»[1]։

«Իստամբուլի երիտասարդներից Սուավի էֆենդիի հայացքների դեմ կրիտիկա» իր հայտնի հոդվածում (1871 թ.) Ախունդովը մերկացնում է Սուավիի ռեակցիոն հայացքները, նրա գազանային ատելությունը այլ ազգերի նկատմամբ, նրա այն քարոզը, թե պետք է խուսափել ուրիշ ազգություններից պատկանող մարդկանցից։ Ախունդովը գրում էր.

«Մենք տեսել ենք ամբողջ երկրագնդի ազգերին կեղտ և կեղտոտ համարելով նրանցից խուսափելու դառն հետևանքները, մինչև այսօր ուրիշ ազգերին չխառնվելու պատճառով գիտություն և արհեստներ ձեռք բերելու մեջ հետ ենք մնացել... մեր տգիտության հայրը եղել է ֆանատիզմը։ Էյ, խարարդար, ֆանատիզմից հեռու մնացե՛ք»[2]։

Ախունդովը պահանջում էր հարգել բոլոր ժողովուրդներին, նրանց լեզուն, գրականությունը, կուլտուրան։ Նա բարձր է գնահատել բազմաթիվ ժողովուրդների կուլտուրան, նրանց առաջավոր գիտնականներին, գրողներին։

Մ. Ֆ. Ախունդովը սպանիչ քննադատության է ենթարկել այն բոլոր պահպանողականներին, որոնք իրեն համարել են Իրանի և Թյուրքիայի թշնամի։ 1871 թվականին իր բարեկամ Ռուհուլգուդուսին (Միրզա Մելքոմ խան) ուղղած նամակում Ախունդովը գրել է.

«Մարդկության թշնամին... ինձ իրանցիների և օսմանցիների վատությունը ցանկացողների շարքին էր դասում...

Ես ի՞նչ գործ ունեմ իրանցու և օսմանցու հետ։ Ես... ցիվիլիզացիա տարածող ամեն մի մարդու հետևորդը և ազնիվ բարեկամն եմ։ Մարդկության թշնամի և ցիվիլիզացիային արգելք հանդիսացող ամեն մի մարդուց հեռու եմ և ձանձրացել եմ»[3]։

Ախունդովը պայքարում էր ոչ թե թյուրք, կամ իրանական ժողովուրդների դեմ, այլ նրանց թշնամիների՝ սուլթանների ու շահերի, վեզիրների ու փաշաների արյունոտ տիրապետության դեմ, պանիսլամիզմի ռեակցիոն գաղափարախոսության դեմ։ Ախունդովը պայքարից երբեք չի վախեցել, դժվարությունների և ռեակցիայի հարձակումները նրան երբեք ետ չեն կանգնեցրել և նա վճռել է պայքարել մինչև վերջ։ «Ես այն մարդկանցից չեմ, որ թշնամու առջև վհանը ցած գցելով նրան հանձնվեմ։ Ինչքան որ կենդանի եմ, մինչև կյանքիս վերջը կռվելու եմ գրչով Ստամբուլի վեզիրների հետ»[4], գրում է նա։

* * *

Մ. Ֆ. Ախունդովը ժողովուրդների թշնամիների շարքում իրավամբ տեսնում էր եվրոպական գաղութարարներին։ Նա իր սպանիչ սատիրայի ամբողջ ուժով մերկացնում և ծաղրում էր «կուլտուրական» Եվրոպայի ամբողջ նեխվածությունը։ Միրզա Ֆաթալին համարձակորեն մերկացնում էր

[1] Մ. Ֆ. Ախունդով, Երկեր, Ադերբեջր, 1938, հատ. 2, էջ 115։

[2] Ադր. ՍՍՌ ԳԱ Նիզամիի անվան Գրականության և լեզվի ինստիտուտի ձեռագրային ֆոնդ, Մ. Ֆ. Ախունդովի արխիվ։

[3] Նույն տեղում։

[4] „Азәрбајҹан әдәбијјаты тарихи". Азәрнәшр, 1944, ч. 2, сәh. 379.

եվրոպական հարստահարիչների գաղութային երկրների հարյուր միլիոնավոր ժողովուրդների նկատմամբ գործադրած գազանային բռնությունը։ Նա շատ լավ էր հասկանում անգլիական և ֆրանսիական գաղութարարների՝ Արևելքի ժողովուրդների նկատմամբ վարած քաղաքականության ագրեսիվ էությունը։ Խոսելով անգլիացիների կողմից Հնդկաստանի ժողովուրդների ստրկացվելու դառն հետևանքների մասին, Ախունդովը գրում է.

«Ամբողջ աշխարհին հայտնի է, որ անգլիացին ինչպես է վերաբերվում Հնդկաստանի բնակչության հետ։ Մթթե «ցիվիլիզացիայից հասած անգլիացին... Հնդկաստանի ազգաբնակչության հետ դեսպոտից լավ է վարվում»[1]։

Անգլիական կառավարությունը այն ժամանակ էլ, ինչպես մեր օրերում, եղել է պատերազմի հրձիգ և իր գաղութային քաղաքականությունը իրագործել է պատերազմների օգնությամբ։

«Խարված աստղեր» (1857) իր հայտնի պատմվածքում Ախունդովը բացահայտում է Անգլիայի ռազմամոլությունը։

* * *

Մ. Ֆ. Ախունդովը ժողովուրդների բարեկամության հարցը երբեք չէր բաժանում աշխատավոր մասսաների ազատագրական պայքարից։ Նա լավ գիտակցում էր, որ այնտեղ, որտեղ իշխում են բռնակալական կարգերը, բոլոր ժողովուրդները ենթարկվում են ճնշման, հարստահարման և կեղեքման, հետևաբար տարբեր ժողովուրդների նույնանման գոյավիճակը պետք է մոտեցնի, մտերմացնի նրանց։

Նա իր անմահ «Հաջի Կարաս» կոմեդիայում կերտել է երկու հայ գյուղացիների կերպարը՝ Առաքելի և Մկրաչի, որոնք իրենց հալալ քրտինքով ապրող մարդիկ են, միևնույն ժամանակ հարևան ադրբեջանցի գյուղացիների ամենամտերիմ բարեկամները։ Միշտ, ամենագժվար բոպեներին նրանք օգնության են հասնում իրար։ Այդ բարեկամության պատճառները, Ախունդովը ճիշտ կերպով տեսնում է նրանց նույնանման գոյավիճակի մեջ։ Ե՛վ հայ և՛ ադրբեջանցի գյուղացին ապրում են նույն ծանր և տանջալից կյանքով, հավասարապես ճնշվում ու հարստահարվում են ցարական չինովնիկների, խանների ու բեկերի, վաշխառուների ու վաճառականների կողմից։ Կոմեդիայի հերոս, ժլատ ու խորամանկ վաճառական Հաջի Կարան ոչ միայն սովի է մատնում իր ընտանիքը, այլև հարստահարում, բռնություն է գործադրում ադրբեջանցի և հայ աշխատավորների վրա։ Նա, անամոթաբար զենք է բարձրացնում անմեղ, ազնիվ, աշխատասեր հայ գյուղացիների վրա։

Պետք է ապտվել Հաջի կարանների ձեռքից, որպեսզի նրանք մեկ էլ զենք չբարձրացնեն անմեղ մարդկանց վրա, պետք է փրկվել ցարական չինովնիկներից, որպեսզի նրանք չպաշտպանեն հաջի կարաններին և չբանտարկեն անմեղ աշխատավոր մարդկանց։ Այս է Ախունդովի եզրակացությունը։

Բայց Ախունդովը չէր բավականանում առանձին չինովնիկների, շահագործողների մերկացումով։ Նա քննադատում էր այն հասարակարգը, այն պետական սիստեմը, որը հնարավորություններ է ստեղծում ոճրագոր-

[1] Մ. Ֆ. Ախունդով, Երկեր, հատ. 3, էջ 160։

ծությունների, խալանի, բռնության համար, ժողովուրդների իրավունքների ոտնահարման համար։

Մ. Ֆ. Ախունդովը Արևելքի ժողովուրդների փրկությունը տեսնում էր ինքնակալության դեմ պայքարի մեջ։ Նա բոլոր ժողովուրդներին կոչ էր անում պայքարի՝ ընդդեմ բռնության և դեսպոտիզմի։ «Արդարությունը իրագործելը և բռնությունը վերացնելը,—գրում է Ախունդովը,—հնարավոր է այն ձևով, որ ասացի վերևում, այսինքն ինքը ազգը պետք է աչքաբաց և գիտության տեր լինի, պետք է միության և դաղափարական միասնության հիմունքները ձեռք բերի, դրանից հետո դիմելով բռնակալին, պետք է ասի. տիրապետության և կառավարության շքեղությունից հետ քաշվիր։

Դրանից հետո, ինքը, ժամանակաշրջանի դրությանը համապատասխան օրենք ընդունելով, Կոնստիտուցիա պետք է դրի և իրագործի այդ։ Այն ժամանակ ազգը նոր կյանք է ձեռք բերելու և Արևելքը գեղեցիկ դրախտի նման է լինելու»։ Բայց այս հսկայական գործերը խրատներով և քարոզներով իրագործել չի կարելի։ «...Գործի իրականացումը խրատելու, քարոզ կարդալու և խորհուրդ տալու մեջ չէ։ Աչքի առջև եղած այս հիմքը արմատից, տակից պետք է քանդվի»։

Պետք է նշել, որ Ախունդովը ժողովուրդներին ռևոլյուցիայի կոչ անելով հանդերձ, մնում է որպես մեծ լուսավորիչ-դեմոկրատ, դեռ չկարողանալով հասնել դասակարգային պայքարի դաղափարին։ Նա ռևոլյուցիայի իրագործումը կապում է ժողովուրդների լուսավորության հետ։ Այնուամենայնիվ, Ախունդովի առաջ քաշած հարցերը, բռնության և ինքնակալության ոչնչացման համար նրա ցույց տված ուղիները, Արևելքի բոլոր ժողովուրդների համար ունեցել են խոշորագույն պրոգրեսիվ նշանակություն։

Մ. Ֆ. Ախունդովը իր ամբողջ կյանքը նվիրեց Արևելքի ժողովուրդներին բռնության ու ֆանատիզմի լծից ազատագրելու, լուսավորելու վեհ գործին։ Բայց այն բազմաթիվ գեղարվեստական, փիլիսոփայական, գրական-քննադատական երկերից, որոնցով ծառայեց նա բոլոր ժողովուրդներին, մեծ հումանիստը մի շարք գործնական քայլեր կատարեց Արևելքի ժողովուրդներին ֆանատիզմի և տգիտության ճիրաններից փրկելու, նրանց կուլտուրական և լուսավորական վերելքի համար։ Այս է հաստատում նրա 20 տարի շարունակ մղած պայքարը հին արաբական գժվար ու թերի այբուբենի դեմ, որը Արևելքի բազմամիլիոն ժողովուրդների կուլտուրական հետամնացության պատճառներից մեկն էր։ Ախունդովը նոր այբուբենի ստեղծումը համարում էր շատ կարևոր, որովհետև այդ նոր այբուբենը, երկրագնդի ազգարնակչության համարյա կեսին, ամբողջ արևելյան ժողովուրդներին փրկելու էր իսլամական կրոնի մոլեռանդությունից, արաբական այբուբենի բազմաթիվ մեծաքանակ դժվարություններից և խթան էր հանդիսանալու Արևելքի ժողովուրդների կուլտուրական վերածննդին։

Այդ է պատճառը, որ Ախունդովը տարիներ շարունակ համառորեն պայքարում էր նոր այբուբենի իրագործման համար. չէր հուսահատվում անհաջողություններից, իր կազմած այբուբենի զանազան նախագծերը ուղար-

---

[1] Մ. Ֆ. Ախունդով, Երկեր, հատ. 3, էջ 218։

[2] Նույն տեղում, էջ 217։

կում էր աշխարհի բազմաթիվ քաղաքները՝ Պետերբուրգ, Փարիզ, Լոնդոն, Բեռլին, Վիեննա, Կոստանդինոպոլիս, Թեհրան, Թավրիզ և այլ տեղեր, զանազան ժողովուրդների ներկայացուցիչների կարծիքը հարցնում։ Չնայած այն բանի, որ Ախունդովի այս օգտակար աշխատանքը անհետևանք մնաց, բայց մեծ մարտնչողը նորից չհուսահատվեց, վստահ, որ գալիք սերունդը անպայման կիրագործի նրա իդեաները։

Ախունդովը հարգել և սիրել է աշխարհի բոլոր ժողովուրդներին։ Այդ ժողովուրդների մեջ նա առաջին տեղը հատկացրել է ռուս մեծ ժողովրդին։ Նա իր ժամանակակիցների մեջ բոլորից լավ, բոլորից հստակ է պատկերացրել ռուս մեծ ժողովրդի ազատարար դերը ադրբեջանական ժողովրդի համար, Արևելքի այլ ժողովուրդների համար։ Նա բարձր է գնահատել առաջավոր ռուս կուլտուրան ու գրականությունը։ Պատահական չէ, որ նա իր առաջին գեղարվեստական երկը՝ «Արևելյան պոեմը» նվիրել է ռուս ժողովրդի մեծ զավակ Ա. Ս. Պուշկինի անմահ հիշատակին։

Մ. Ֆ. Ախունդովը խոշոր նշանակություն է տվել Ադրբեջանի Ռուսաստանի հետ միացմանը, որը կարևորագույն դեր է խաղացել ադրբեջանական աշխատավորների քաղաքական-տնտեսական կուլտուրական կյանքում։ Նա շատ լավ գիտեր, որ «ռուսների հովանավորության տակ միանգամայն ապահովված է նրանց կյանքը, սեփականությունը և պատիվը, մինչդեռ նրանց եղբայրակիցները Պարսկաստանում և Թյուրքիայում գտնվում են խղճալի դրության, սարսափելի թշվառության մեջ»։

Ախունդովը հավատում էր ադրբեջանական ժողովրդի փայլուն և երջանիկ ապագային։ Որովհետև ռուս մեծ ժողովուրդը ամուր բռնել էր նրա ձեռքից, փրկել էր ահռելի կործանումից, պարսիկ և օսմանական բարբարոսների կողմից սպառնացող վերջնական ընաջնջումից։

Մեծ գրողի և մտածողի իդեաները այժմ ամբողջովին իրականացել են։ Ադրբեջանական ժողովուրդը դարձել է առաջավոր սովետական մի ժողովուրդ, ստեղծելով ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական բարձր կուլտուրա։

Ախունդովը գիտակցում էր, որ Արևելքի այլ ժողովուրդներ, օրինակ՝ Իրանի և Թյուրքիայի խեղճ ու տանջված, սովի ու մահի ենթարկված, իսլամական կրոնի, տգիտության և ֆանատիզմի սպանիչ հարվածների տակ հեծող աշխատավոր ժողովուրդները նույնպես ռուս ժողովրդի օգնությամբ կարող են պրոգրեսի ուղին բռնել։ Այդ են վկայում մեծ մտածողի այն խոսքերը, որտեղ նա համեմատում է Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող ադրբեջանցիների կյանքի բարենպաստ պայմանները Թյուրքիայի և Իրանի ժողովուրդների ողբերգական վիճակի հետ։

Այժմ պատմությունը փայլուն կերպով ապացուցել է ռուս մեծ ժողովրդի վճռական դերը աշխարհի բազմաթիվ ժողովուրդների ազատագրության գործում։ Այժմ, Սովետական Միությունում ապրող և իրենց ավելի երջանիկ կյանքի համար պայքարող 60-ից ավելի ազգեր և ազգություններ, այդ թվում Անդրկովկասի ժողովուրդները, դարավոր ճնշումից իրենց ազատագրվելու համար պարտական են միայն և միայն ռուս մեծ ժողովրդին, նրա եղբայրական օգնությանը։ Ռուս ժողովրդի գլխավորությամբ ստեղծվել է ՍՍՌՄ-ի ժողովուրդների անսասան ստալինյան ընտանիքը։

«Մեր երկրի ժողովուրդների բարեկամությունը ցեմենտող ուժը,—ասել

է ընկեր Լ. Պ. Բերիան,—հանդիսանում է ռուս ժողովուրդը, ռուս ազգը՝ որպես Սովետական Միության կազմի մեջ մտնող բոլոր ազգերից առավել ականավոր ազգ։

Ռուս մեծ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ժողովուրդների զավակներից բաղկացած հզոր Սովետական Բանակը Արևելյան Եվրոպայի բազմամիլիոն ժողովուրդներին փրկեց ֆաշիստական սպառնալիքից և ապահովեց նրանց երջանիկ կյանքը։ Այդ ժողովուրդների օգնությամբ ազատագրվել՝ այժմ իր երջանիկ կյանքն է կառուցում չին մեծ ժողովուրդը։

Սովետական Միությունը հանդիսանում է այն հզոր ուժը, որ միացնում է աշխարհի բոլոր ազատասեր և խաղաղասեր ժողովուրդներին՝ իմպերիալիզմի և պատերազմի հրձիգների դեմ նրանց մղած համառ պայքարում։

Այդ պայքարի քաջարի մասնակիցների շարքերումն են գտնվում Արևելքի բազմամիլիոն ժողովուրդները՝ արաբները, հնդիկները, իրանցիները, թյուրքերը և շատ ուրիշները, որոնց ազատության ու անկախության մասին երազում էր մեծ Ախունդովը և որոնց պայքարի էր կոչում բռնության ու խավարի դեմ։

Եվ այսօր, երբ իմպերիալիզմը աշխարհի խաղաղասեր ժողովուրդներին ստրկացնելու, սրի ու հրի մատնելու քաղաքականություն է վարում, նոր ուժով են հնչում Ախունդովի ազատասիրական գաղափարները, ժողովուրդների եղբայրության կոչերը։

Մեծ մատերիալիստ, ժողովուրդների բարեկամության դրոշակակիր Մ. Ֆ. Ախունդովը իր առաջավոր, պրոգրեսիվ գաղափարներով ապրում է այսօր, մասնակցում գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների մղած հերոսական ազատագրական պայքարին՝ ուղղված իմպերիալիստական բռնության և ստրկության դեմ։ Նա օգնում է մեզ, սովետական մարդկանց սիրել մեր Սովետական Հայրենիքը, հարգել բոլոր ազատասեր և խաղաղասեր ժողովուրդներին, սիրել ռուս մեծ ժողովրդին և ատել ժողովուրդների բարեկամության բոլոր թշնամիներին։

---

[1] Լ. Պ. Բերիա, Ճառ Համկ(բ)Պ XIX համագումարում, Հայպետհրատ, 1952, էջ 21։